

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2-1

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2021թ. հունվարի 22 -ին ժ. 14⁰⁰ -ին online ռեժիմով տեղի
ունենցած թիվ 2-1 նիստը:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 28-ը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի ռազմավարական գործողությունների ծրագրի՝ 2021-2025 տարի
քննարկում և հաստատում:

Զեկ. Գ. Դեմիրխանյան

2. Ընթացիկ հարցեր.

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների
պլանի մասին Գ. Դեմիրխանյանի զեկույցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց Ֆակուլտետի 2021-25 թթ.
ռազմավարական ծրագրի գործողությունների: Այնուհետև տեղի ունեցավ
քննարկումներ:

Լ. Արաբաջյանը, նա խորհրդի ուշադրությունը հրավիրեց ծրագրի 2.2 կետին, այն որ
դասախոսների համար ստեղծված են բոլոր պայմանները, այնինչ մաթեմատիկայի և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի երկու դասախոսի մեկ սեղան է հասնում:

Հ. Միքայելյանը կատարեց մի շարք լրացումներ մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ: Նա ներկայացրեց լրացումները համապատասխան տեղերում:

Նմանատիպ, այդ թվում խմբագրական, առաջարկություններ արեցին Է. Կոկանյանը,

Հ. Հարությունյանը, Ա. Սահրադյանը:

Գ. Դեմիրխանյանն՝ ընդունելով առաջարկված ուղղումները առաջարկեց հաստատել գործողությունների ծրագիրը համապատասխան ուղղումներով:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քվեարկության արդյունքում՝ միաձայն, հաստատել ֆակուլտետի 2021-2025 ուսումնական տարիների ռազմավարական ծրագրի գործողությունների պլանը:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝

Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Ա. Գրիգորյան



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2021թ. հոկտեմբերի 6 –ին ժ. 14:30 –ին 302 լսարանում

տեղի ունեցած թիվ 1 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 23-ը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում:
Զեկ. Գ. Դեմիրխանյան
2. 2020-2021 ուստարվա առկա ուսուցման երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում:
Ն. Օրդյան
3. Ընթացիկ հարցեր

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

Գ. Դեմիրխանյանը անդրադարձավ կազմակերպչական որոշ հարցերի, նա ասաց որ ռոտացիա է եղել և խորհրդի կազմում տեղի է ունեցել ուսանողների փոփոխություն, նրանց ավարտելու պատճառով ինչպես նաև Վ. Խառատյանի փոխարեն ընդգրկված է խորհրդի կազմում Ս. Ասատրյանը, քանի որ նա դեկանի տեղակալ է դարձել գիտության գծով:

ԼՄԵՑԻՆ. – Ֆակուլտետի խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց Ֆակուլտետի խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը, որը նախապես ուղարկված էր խորհրդի անդամներին ծանոթանալու համար: Հ. Միքայելյանը, նա ասաց , որ պետք է ուշադրություն դարձնել մաթեմատիկայի մեթոդիկայի դրվածքին համալսարանում: Գ. Դեմիրխանյանը, նա ավելացրեց, որ ոչ միայն մաթեմատիկայի մեթոդիկայի դրվածքին, այլ բոլոր մեթոդիկաների: Ս. Ասատրյանը, նա ասաց, որ ֆակուլտետի գիտական գործունեության հաշվետվություն չկա: Գ. Դեմիրխանյանը պատասխանեց, որ ամբիոնների հաշվետվությունների մեջ ներկայացված է: Ս. Ասատրյանը, նա ասաց, որ այն ինչ վերաբերվում է ուսումնական գործունեությանը, դա ծրագրում կա, իսկ գիտական գործունեության մասին չկա: Գ. Դեմիրխանյանը պատասխանեց, որ ամբիոնների գիտական գործունեությունը չենք կարող պլանավորել: Լ. Ղուլդազարյանն

առաջարկեց հաջորդ խորհրդի նիստում քննարկել գիտական գործունեությունը: Գ. Դեմիրխանյանը, նա ասաց, որ տիկին Գևորգյանը տարեկան հոդվածների ցուցակն ուզում է վարկանիշային միավորների և հետադարձ կապի համար: Մայիսի նիստերին, դա կլինի 6-րդ կամ 7-րդ նիստը, օրակարգում կդնենք ֆակուլտետի ամբիոնների կողմից գիտական գործունեության ներկայացում և քննարկում: Այս երկու լրացումներով հաստատենք ֆակուլտետի գործունեության ծրագրի պլանը

ՈՐՈՇԵՑԻՆ.- (քվեարկության արդյունքում- միաձայն) Երկու լրացումներով հաստատել աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.- 2020-2021 ուստարվա առկա ուսուցման երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Օրդյանը ներկայացրեց, որ պարտքեր ունեն և պայմանական են փոխադրվել Մոստյան Պետրոս- 8 կրեդիտ (III կ. ֆիզիկա), Չոփիկյան Անժելա -5կրեդիտ (IIIկ մաթեմատիկա), ինֆորմատիկներ Սողիկյան Հրանտը, Հայրապետյան Ռուզաննան, Կարապետյան Վրեժը – 4- ական կրեդիտ դիսկրետ մաթեմատիկայից: Ինֆորմատիկներից մնացին պարտք Պետրոսյան Գոռը- 5կրեդիտ, Ամիրզադյան Արմենը երկու առարկայից 2+2 կրեդիտ: Մագիստրատուրայում իրենց դիմումի համաձայն ազատվել են մաթեմատիկներ Գասպարյան Ռազմիկը, Սուրադյան Սյուզանը , ինֆորմատիկներ Բեգլարյան Անուշը, Հակոբյան Անուշը:

Վ. Վարդազարյանը, նա ասաց, որ կարծես առաջադիմության պրոբլեմը լուծել ենք:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր

ա) Ա. Գրիգորյանը ներկայացրեց, որ մեր ուսանողները ամառվա ընթացքում մասնակցել են ջոկատներում կազմակերպված աշխատանքներին և ոչ միայն ջոկատում այլ նաև հեքիաթային կիրճ կենտրոնում 44-օրյա պատերազմի ընթացքում տունը և տեղը կորցրած երեխաների համար կազմակերպած միջոցառումներին և մանկավարժական դասերին և այդ ուսանողներին տրվել են աշխատանքային ժամեր,ու հիմա պետք է որոշել թե նրանց ինչքան կրեդիտ տանք վարկանիշային միավորները բարձրացնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Է. Գուլյանը, Ն. Օրդյանը, Գ. Դեմիրխանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ըստ ժամերի քանակի տալ համապատասխան կրեդիտներ:

բ) հեռակա բակալավրիատ 5-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Է . Գուլյանը ներկայացրեց, որ հեռակա բակալավրիատ 5-րդ կուրսի պրակտիկան հոկտեմբերի 13-ից տեղափոխենք նոյեմբերի 2 (4 շաբաթ) մինչև նոյեմբերի 26-ը: Ն.

Օրոյանը դա հիմնավորեց նրանով, որ հոկտեմբերի 13-ին դեռ պարզ չէ թե ով է տեղավորվել 5-րդ կուրս, քանի որ լուծարքը չի եղել:

ՈՐՈՇԵՑԻՆ.-(քվեարկության արդյունքում- միաձայն) ընդունել առաջարկը և ներկայացնել համապատասխան օղակին:

գ) ընդունելության հետ կապված:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Գ. Դեմիրխանյանը փաստեց, որ ինչքան ավարտել են այնքան էլ ընդունվել են: Այս տարի այցելություն դպրոցներին մնացել է: Անցած տարվա արված մրցույթի արդյունքներով 5 հոգի եկել են մաթեմատիկայի բաժին: Մրցույթի շահողների ուսման վարձը զեղչվում է: Առաջարկեց այս մրցույթը անցկացնել ամեն ամիս: Ա. Թադևոսյանն առաջարկեց վերապատրաստված ուսուցիչներին իրազեկել դրա մասին, ովքեր ներկայացնում են 44 դպրոց: Գ. Դեմիրխանյանը նշեց նաև, որ զեղչվում է, ոչ միայն առաջին տարվա ուսման վարձը, այլ ողջ ուսման ընթացքում կապված մոզերի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն

դ) վերականգնել մեթոդական խորհուրդը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը նշեց, որ պետք է վերականգնել մեթոդական խորհրդի աշխատանքները, ովքեր կքննարկեն ուսումնական պլանները և կներկայացնեն ֆակուլտետի խորհրդին: Մաթեմատիկայի ամբիոնի ուսումնական պլանները էլեկտրոնային տարբերակները ուղարկել մեթոդական խորհրդի անդամներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն

Գ. Դեմիրխանյանը տեղեկացրեց, որ այս տարի առաջին անգամ հեռակա մագիստրոսների թեզերի պաշտպանություն է լինելու: Նա ասաց նաև, որ վաղը՝ հոկտեմբերի 7-ին ժամը 10 –ին կարմիր դահլիճում տեղի է ունենալու «մաթեմատիկական կրթություն» միջազգային գիտաժողովը:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2021թ. նոյեմբերի 15 –ին ժ. 14:30 –ին առցանց

տեղի ունեցած թիվ 2 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 23-ը:

Օրակարգ

1. «Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիայի» գործունեության մասին:

Զեկ. Է. Կոկանյան

2. Ընթացիկ հարցեր

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը (միաձայն):

ԼՄԵՑԻՆ. – «Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիայի» գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Լաբորատորիայի աշխատանքները ներկայացրեց Է. Կոկանյանը: Է. Կոկանյանը ամբիոնի վարիչ է 2011-2012 թ-ից, ունի 145հոդված գրախոսվող ամսագրերում և ինդեքսով, դիտումների թիվը 1300 (Scopus), 11 միջազգային դրամաշնորհների ղեկավարում, 20 միջազգային անհատական դրամաշնորհներ: Է. Կոկանյանը ներկայացրեց լաբորատորիայի աշխատողների կազմը, պատմեց լաբորատորիայի գործունեության մասին՝ սեմինարների կազմակերպում, համագործակցություններ, տպագրություններ: Գ. Դեմիրխանյանը շնորհակալություն հայտնեց հանգամանակից բացատրության համար, և հարցրեց հարցեր կա՞ն: Բազային ֆինանսավորումը հաստատվել է եկող տարվա համար, ի՞նչ է նախատեսվում անել: Է. Կոկանյանը պատասխանեց, որ աշխատանքները բազմազան է, աշխատանքները շարունակվելու են սենսորիկայի բնագավառում: Սենսորները պետք են գիտության տարբեր բնագավառների համար՝ օպտիկական, միկրո և նանո կառուցվածքների ճարտարագիտության առումով: Հ. Հարությունյանն ասաց, որ ամեն ինչ հետաքրքիր է և արդյունքները բարձր են և հարցրեց կադրային առումով դժվարություններ ունեն թե՞

ոչ: Է. Կոկանյանը բացատրեց, որ ունեն սարքերի խնդիր: Ռոմանյան միկրոսկոպին ուզում են միացնել բլոկ, որը մեծ հնարավորություն կստեղծվի հետագա հետազոտությունների համար և պետք է փորձենք ներգրավել երիտասարդների ոչ միայն հետաքրքրությամբ այլև ֆինանսապես: Հ. Հարությունյանը հարցրեց արդյոք համագործակցության արդյունքում ունեցած միջազգային գրանտները չէ՞ն բավարարում: Է. Կոկանյանը պատասխանեց, որ կան միջազգային ծրագրեր, որոնց տեխնիկական մասը զգալի բարդ են, որն իրականացնում են տեխնիկական խմբերը: Հ. Հարությունյանն ասաց, որ իրենք պատրաստ են օգնելու: Կ. Վարդանյանը հարցրեց թե մանկավարժական համալսարանի շրջանավարտներին, ովքեր գրում են ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր և սովորում են ասպիրանտուրայում, այդ ամենը ի՞նչ է տալիս: Է. Կոկանյանն փաստեց, որ իրենք միշտ զգացել են իրականացվող օգնությունը: Լաբորատորիայում կա ջրային լուծույթի բյուրեղների աճեցման սարքեր: Ուսանողներին հնարավորության սահմաններում գրավում ենք Ռոմանյան հետազոտություններում, արդյունքները օգտագործում են իրենց ավարտական աշխատանքներում, ներգրավում ենք նաև «բյուրեղների աճեցման տեսության» դասախոսություններին: Լ. Արաբաջյանը հետաքրքրվեց, թե որտեղ են կիրառվում: Է. Կոկանյանն ասաց, ֆիզիկայի հետազոտության ինստիտուտում, ռադիոֆիզիկայի ինստիտուտում, Ալիխանյանի ինստիտուտում: Թեմաների շրջանակում ստեղծում ենք սարքի պրոտոտիպ, որը հետագայում կարելի է ստանալ վաճառքի սարք: Շատ բաներ մնում են «no how» կարգավիճակում: Տ. Այվազյանը մեկնաբանեց, որ դրա համար պետք է լինեն կոնստրուկտորական բյուրոներ, որոնք կիրականացնեն այդ: Արտադրություն կազմակերպելը լաբորատորիայի ուժերից վեր է: Ա. Սահրադյանն էլ հետաքրքրվեց, թե այդ ամենի համար ինչ նյութեր են օգտագործվում: Է. Կոկանյանն ասաց, որ դրանք 99,999% մաքրության նյութեր են, որը թանկ հաճույք է՝ լիցիում, գրաֆիտ, նիաբատ: Այսօրվա դրությամբ ամենաեժան շուկան Չինաստանն է, հիմնականում «Jonson&Jonson» ֆիրմայի, ամեն անգամ պետք է նայել շուկան որպեսզի խառնուրդ չառնենք, մենք ենք այն ստեղծում: Ա. Սահրադյանը փաստեց, որ Արամը Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտում նոր բյուրեղ է ստացել: Է. Կոկանյան – Մոդիֆիկացրել է Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտի սարքերը: Գ. Դեմիրխանյանը շնորհակալություն հայտնեց Է. Կոկանյանին, նա ասաց, որ ինքը որպես դեկան ուզում է ասել, որ այն համալսարանում որտեղ պատրաստում են ֆիզիկայի ուսուցիչ ամեննին չեն խախտում, որ ուսանողներին գրավում ենք նման թեմաններում: Ուսանողներ ունենք, ովքեր հետագայում զբաղվում են գիտական գործունեությամբ: Ֆիզիկայի ուսուցիչը պետք է ավելին իմանա, որպեսզի կարողանա իր աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնել: Առողջ կոնկուրենցիա է

ստեղծվում աշխատանքային միջավայրում: Բոլորովին վերջերս պատկառելի հանձնաժողով եկավ (ռազմածովային) և այցելեցին ֆիզիկայի ինստիտուտներով: Է. Կոկանյանն էլ շնորհակալություն հայտնեց ուշադրության համար և ասաց, որ եկող կազմակերպությունները գալիս են իդեաներ ձեռք բերելու համար, պետք է զգույշ լինել: Վ. Կիրակոսյանը ևս շնորհակալություն հայտնեց թե՛ զեկույցի և թե՛ կազմակերպված գիտ խորհրդի նիստ անելու համար:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի

նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդի
2021թ. դեկտեմբերի 17 –ին ժ. 14:30 –ին 302 լսարանում տեղի ունեցած թիվ 3 նիստի:
Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 23-ը:

Օրակարգ

1. Հեռակա բաժնի 2020 – 21 ուստարվա քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Ջեկ. Ն. Օրդյան

2. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին:

Ջեկ. Ա. Թադևոսյան

Լ. Ղուլդազարյան

Ա. Սահրադյան

3. Հեռակա բաժնի մագիստրոսների ամփոփիչ ատեստավորման և պետական

քննությունների կազմակերպման մասին:

Ջեկ. Գ. Դեմիրխանյան

4. Ընթացիկ հարցեր

ա) Համալսարանի ուսումնամեթոդական բաժնից Գուրգեն Հովհաննիսյանից ստացված գրությունը:

բ) – Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ Գոհար Հենրիկի Նահապետյանի <<«Թվային գրագիտության եվ համակարգչային գիտության» դասընթացի դասավանդման արդյունավետության բարձացումը առաջանցիկ ուսուցման մոդելների կիրառմամբ>> վերնագրով ատենախոսության թեմայի վերնագրի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

գ) Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Մաբինա Գասպարյանի «Մաթեմատիկական անալիզի դասավանդման առանձնահատկությունները համակցված ուսուցման ընթացքում» ատենախոսության թեմայի վերնագրի և ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Հեռակա բաժնի 2020 – 21 ուստարվա քննաշրջանի արդյունքների ամփոփումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Ն. Օրդյանը, որ հեռակա բակալավրիատից և մագիստրատուրայից կոցրել ենք 15 ուսանող՝ 10-ը բակալավրիատից և 5-ը մագիստրատուրայից. տեխնոլոգիա և ձեռնարկչություն բաժնից Սողոմոնյան Գայանեն ուսման վարձի և պարտքերի համար, երրորդ կուրսից Կուրդինյան Հայկը նույն պատճառով: Ֆիզիկներիցդուրս են մնացել առաջին կուրսից երկու հոգի պարտքերի

պատճառով: Մաթեմատիկայի բաժնի հեռակա բակալավր 4-րդ կուրսից Հարությունյան Սևակը և Մանուկյան Արմենը, մագիստրատուրայի առաջին կուրսից Ասլանյան Գարեգինը, մագիստրատուրա երկրորդ կուրսից Սամսոնյան Հասմիկը, ով վարձի պրոբլեմներ ուներ: Ինֆորմատիկայի բաժնից հեռակա բակալավր առաջին կուրսիցմեկ հոգի՝ Պողոսյան Լենան, չորրորդ կուրսից երեք հոգի՝ Բեգլարյան Գարիկը, Պողոսյան Սարգիսը և Մարկոսյան Գայանեն (իր դիմումի համաձայն): Ինֆորմատիկայի մագիստրատուրայի առաջին կուրսիցՓարսադանյան Լուսինեն (իր դիմումի համաձայն), երկրորդ կուրսից՝ Բուդաղյան Գոհարը և Սարգսյան Քրիստինեն: Ն. Օրոյանը փաստեց, որ ամենաշատը դուրս են մնացել ինֆորմատիկա մասնագիտությունից՝ 7 հոգի, 4-ը մաթեմատիկայից, 2-ը ֆիզիկայից և 2-ը տեխնոլոգներից:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն

ԼՍԵՑԻՆ - Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ՝ Փառանձեմ Համբարձումյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ղուլագարյանը իր ելույթում ասաց, որ Փառանձեմ Համբարձումյանը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է դասերի մեծամասնությանը, կատարել է տարբեր առարկաներից հանձնարարված առաջադրանքները, ուսումնասիրել և վերլուծել է գիտական գրականություն՝ ատենախոսության թեմայի շրջանակներում, մասնակցել է Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում կայացած միջազգային գիտաժողովին, զեկույցի թեզիսը տպագրվել է թեզիսների ժողովածուում, 1 հոդված հանձնվել է տպագրության :

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել 1-ին տարվա հայցորդ Փառանձեմ Համբարձումյանին՝ /ղեկավար Լ. Ղուլագարյան/ :

ԼՍԵՑԻՆ. – Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ՝ Արաքս Հարությունյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Լ. Ղուլագարյանը ասաց, որ Արաքս Հարությունյանը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է դասերին, հանձնել է քննություններ SS և մանկավարժություն, գիտական հետազոտությունների մեթոդաբանություն առարկաներից՝ գերազանց և լավ արդյունքներով, կատարել է տարբեր առարկաներից հանձնարարված առաջադրանքները, ուսումնասիրել և վերլուծել է գիտական գրականություն՝ ատենախոսության թեմայի շրջանակներում, իրականացրել գիտահետազոտական և գործնական աշխատանքներ: Տպագրել է 1 հոդված, աշխատում է մի քանի հոդվածների բովանդակության մշակման վրա :

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ատեստավորել 2-րդ տարվա հայցորդ Արաքս Հարությունյանին՝ /ղեկավար Մ. Մկրտչյան/ հաշվի առնելով նրա կատարած աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում:

ԼՍԵՑԻՆ. – Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ՝ Սլավիկ Ալավերդյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Լ. Ղուլագարյանը իր ելույթում ներկայացրեց, որ Սլավիկ Ալավերդյանը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է ասպիրանտների և հայցորդների համար նախատեսված դասընթացների մեծ մասին և հավաքել է համապատասխան կրեդիտները, մշակել և փորձարկել է բազմառարկայական ուսումնական կոմպետենցիաների ձևավորմանը նպաստող առաջադրանքներ, մասնակցել է Տավուշի մարզում հանրակրթական նոր չափորոշիչների և առարկայական ծրագրերի փորձարկմանը, աշխատում է գիտական հոդվածի վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ.– Ատեստավորել 2-րդ տարվա հայցորդ Սլավիկ Ալավերդյանին՝ /ղեկավար Ա. Ղուլչյան/ հաշվի առնելով նրա կատարած աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում:

ԼՍԵՑԻՆ. – Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի առաջին կուրսի հայցորդ՝ Երանուհի Խաչիկի Հարությունյանի ատեստավորման հարցի մասին:

Մրտահայտվեցին – Ա.Թադևոսյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդների հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները:

Որոշեցին – Ատեստավորել ամբիոնի հայցորդ՝ Երանուհի Խաչիկի Հարությունյանին:

Լսեցին – Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի երկրորդ կուրսի հայցորդ՝ Համլետ Գալստյանի ատեստավորման հարցի մասին:

Մրտահայտվեցին – Ա.Թադևոսյանը Հ.Հարությունյանը:

Որոշեցին – Ատեստավորել ամբիոնի հայցորդ՝ Համլետ Աշոտի Գալստյանին:

ԼՍԵՑԻՆ. – Հեռակա բաժնի մագիստրոսների ամփոփիչ ատեստավորման և պետական քննությունների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Գ. Դեմիրխանյանն ասաց, որ այս տարի առաջին անգամ կունենանք շրջանավարտ հեռակա մագիստրատուրայում: Ամեն ինչ նոր մեզ համար: Տեխնոլոգիան չունի հեռակա մագիստրատուրա: Ժամանակացույցը կազմված է: Բոլոր պրոցեդուրաները պետք է անցնեն: Նախապաշտպանությունը վերջացնել դեկտեմբերի մեջ, մաթեմատիկները դեկտեմբերի 23-ին, ինֆորմատիկայինը դեկտեմբերի 24-ին, ֆիզիկները դեկտեմբերի 27-ին, կազմակերպել ինչպես առկա մագիստրատուրայի համար է արվում, հետո պաշտպանությունները հունվարի մեջ. ֆիզիկները

հունվարի 31-ին, մաթեմատիկները փետրվարի 1-ին, ինֆորմատիկները փետրվարի 4-ին: Հաստատվել են հանձնաժողովի նախագահները: Պաշտպանությունը կլինի offline: Ֆիզիկայի հանձնաժողովի նախագահը Հարությունյան Իշխանն է, ԵՊՀ օպտիկայի ամբիոնից, աշխատել է Քվանտ վարժարանում, ֆիզմաթ գիտությունների թեկնածու է: Ինֆորմատիկայի հանձնաժողովի նախագահն է Ծատուրյան Արմենը, Վանաձորի բնագիտամաթեմատիկական դպրոցի տնօրենը, մանկ. գիտ. դոկտոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ: Մաթեմատիկայի հանձնաժողովի նախագահը Ստեփանյան Սեյրանն է, ԵՊՀ, Թվային անալիզի և մաթ մոդելավորման ամբիոն, ֆ.մ.գ. թ., տեխն. գ. դ., դոցենտ: Նախագահներին ներկայացրել են ամբիոնների վարիչները: Հանձնաժողովները բախկացած են ութ հոգուց, ավելի պետք է չլինեն (ուղիղ կեսը պետք է լինեն դրսից): Ճիշտ կազմակերպելու դեպքում այդպես էլ կգնա: Հ. Միքայելյանը հարցրեց հանձնաժողովի անդամների ցուցակը ունե՞ք: Գ. Դեմիրխանյանն էլ պատասխանեց, որ եթե կարիք կա հանձնաժողովի անդամների անունները կկարդա: Նա ասաց նաև, որ փորձել են ընտրել այնպիսի մարդկանց ովքեր կապ ունեն դպրոցների հետ և ծանոթ են մեր համալսարանի միջավայրին և առանձնահատկություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն

Ընթացիկ հարցեր

ԼՄԵՑԻՆ. – ա) Համալսարանի ուսումնամեթոդական բաժնից Գուրգեն Հովհաննիսյանից ստացված գրությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը կարդաց գրությունը, որն ուղարկվել է ամբողջ համալսարանին: Գրության մեջ տեղեկացվում էր, որ ուսման վարձերի մուծման գործընթացը հաշվապահության տվյալներով ընթանում է անբավարար և առաջարկվում էինտենսիվ աշխատանքներ իրականացնել այդ ուղղությամբ: Մինևույն ժամանակ տեղեկացվում էր, որ ուսումնական վարձից պարտք ունեցողներին չի թույլատրվի մասնակցել միջանկյալ քննություններին, իսկ ավարտական կուրսի ուսանողներին նախապաշտպանությանը: Այնուհետև Գ. Դեմիրխանյանը ասաց, որ մինչև 22-ը դեկանատից ամբիոն կտան այն ուսանողների ցուցակը, ովքեր չեն կարող մասնակցել միջանկյալներին և նախապաշտպանությանը: Ամփոփիչ քննություններն offline է:

ԼՄԵՑԻՆ. –բ) – Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ Գոհար Հենրիկի Նահապետյանի <<«Թվային գրագիտության եվ համակարգչային գիտության» դասընթացի դասավանդման արդյունավետության բարձացումը առաջանցիկ ուսուցման մոդելների կիրառմամբ>> վերնագրով ատենախոսության թեմայի վերնագրի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ա. Թադևոսյանը, Հ. Միքայելյանը, Ս. Ասատրյանը: Հ. Միքայելյանն առաջարկեց փոփոխություն անել վերնագրի մեջ: Բուռն քննարկում սկսվեց: Ա. Թադևոսյանն առաջարկեց այդպես

հաստատել, իսկ Ս. Ասատրյանն առաջարկեց արդիականությունն ուղարկել խորհրդի անդամներին և երկուշաբթի հավաքվենք հաստատելու:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Արդիականությունն ուղարկել խորհրդի անդամներին և երկուշաբթի հավաքվենք հաստատելու:

ԼՄԵՑԻՆ. – գ) Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Սաբինա Գասպարյանի «Մաթեմատիկական անալիզի դասավանդման առանձնահատկությունները համակցված ուսուցման ընթացքում» ատենախոսության թեմայի վերնագրի և ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Ս. Ասատրյանն առաջարկեց նույն ձևով վարվել Սաբինայի թեմայի վերնագրի կապակցությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Արդիականությունն ուղարկել խորհրդի անդամներին և երկուշաբթի հավաքվենք հաստատելու:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդի
2021թ. դեկտեմբերի 21 –ին ժ. 15:00 –ին առցանց տեղի ունեցած թիվ 4 նիստի:
Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 20-ը:

Օրակարգ

1. Ասպիրանտների և հայցորդների ատենախոսական թեմաների հաստատման մասին:

Զեկ. Լ. Ղուլղազարյան
Ա. Թադևոսյան
Է. Կոկանյան

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկ. Ա. Թադևոսյան
Է. Կոկանյան
Լ. Ղուլղազարյան
Ա. Սահրադյան

3. Ընթացիկ հարցեր

ԼՄԵՑԻՆ. – Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Սաբինա Գասպարյանի ատենախոսության թեմայի վերնագրի և ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Լ. Ղուլղազարյանը ներկայացրեց թեմայի վերնագիրը, արդիականությունը, խնդիրները, նպատակը, առարկան, հետազոտության օբյեկտը, մեթոդները : Հ. Միքայելյանը, Լ. Արաբաջյանը, Ս.

ՈՐՈՇԵՑԻՆ.- Քվեարկության արդյունքում (միաձայն) հաստատել մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Սաբինա Գասպարյանի ատենախոսության թեման՝ *«Մաթեմատիկական անալիզի դասավանդման առանձնահատկությունները համակցված ուսուցման ընթացքում»* վերնագրով և թեմայի գիտական ղեկավար նշանակել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Ղուլղազարյանին:

ԼՄԵՑԻՆ. – Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ Գոհար Հենրիկի Նահապետյանի թեմայի վերնագրի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Թադևոսյանը խոսեց <<«Թվային գրագիտություն եվ համակարգչային գիտություն» դասընթացի դասավանդման արդյունավետության բարձացումը առաջանցիկ ուսուցման մոդելների կիրառմամբ>> վերնագրով ատենախոսության թեմայի արդիականության, հետազոտության նպատակի,

հետազոտության նորարարության, հետազոտության մեթոդների, խնդիրների մասին: Ա. Գրիգորյանը կարդաց Հ. Միքայելյանի գրած դիտարկումները «Ինձ թվում է, որ. 1. Գոհարի թեմայի արդիականության մասը ձգձգված է: Առաջին մասը ոնց-որ նպատակին չի ծառայում: Չի խոսվում առաջանցիկ ուսուցման մոդելների մասին, արդիականությունը չի բխեցվում հարցի ուսումնասիրության արդի վիճակից: Սա պետք է հաշվի առնել մանավանդ հետագայում՝ ատենախոսությունը գրելուց: Թեմայի վերնագիրը երևի հարմար կլինի ձևակերպել հետևյալ կերպ. Առաջանցիկ ուսուցման մոդելների կիրառումը թվային գրագիտության և համակարգչային գիտության ուսուցման գործընթացում կամ Առաջանցիկ ուսուցման մոդելների կիրառումը "թվային գրագիտություն և համակարգչային գիտություն" առարկայի ուսուցման գործընթացում

2. Սարինայի թեզի վերնագրում հետազոտության առարկան հարմար կլինի կոնկրետացնել:

3. Քո ուղարկած մնացած նյութի մասին կգրեմ առաջիկայում

Հարգանքով՝ Հ.Մ.»

ՈՐՈՇԵՑԻՆ.- Քվեարկության արդյունքում (միաձայն) հաստատել ատենախոսության թեման <<«**Թվային գրագիտություն եվ համակարգչային գիտություն» դասընթացի դասավանդման արդյունավետության բարձացումը առաջանցիկ ուսուցման մոդելների կիրառմամբ** >> վերնագրով :

Ղեկավար նշանակել մ.գ.դ., ՌԴ պրոֆեսոր Արմեն Միշայի Ծատուրյանին, ԺԳ.00.02 <<Դասավանդման և ուսուցման մեթոդիկա /ըստ բնագավառների/>> մասնագիտությամբ:

ԼՍԵՑԻՆ. – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- . Ա. Թադևոսյանը, Է. Կոկանյանը, Լ. Ղուլղազարյանը, Ա. Սահրադյանը ներկայացրեցին ամբիոններում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: Գ. Դեմիրխանյանն էլ ասաց, որ վաղվանից սկսվում են միջանկյալները, վերադառնում ենք մեր նախկին գործելաձևին, ինչպես հին և բարի ժամանակներում: Սկսվելու են նաև նախապաշտպանությունները

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ՄՅԻ ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝

Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդի
2021թ. փետրվարի 17 –ին հարցման կարգով տեղի ունեցած թիվ 5 նիստից

Օրակարգ

1. ՄՖԻ ֆակուլտետի Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության պետական հանձնաժողովների հաշվետվության քննարկումն է:
2. Ընթացիկ հարցեր

Եթե Դուք համաձայն չեք կամ ձեռնպահ եք, որ որպես ի գիտություն ընդունենք ՄՖԻ ֆակուլտետի Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության պետական հանձնաժողովների հաշվետվությունը, ապա խնդրում եմ ուղարկել Ձեր կարծիքն այս հասցեով: Մոտակա նիստին ավելի մանրամասն կանդրադառնանք հանջնաժողովների հաշվետվություններին: Հարգանքներով Ա. Գրիգորյան:

ԼՄԵՑԻՆ. – ՄՖԻ ֆակուլտետի Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության պետական հանձնաժողովների հաշվետվությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Լ. Ղուլղազարյանը ներկայացրեց թեմայի վերնագիրը, արդիականությունը, խնդիրները, նպատակը, առարկան, հետազոտության օբյեկտը, մեթոդները : Հ. Միքայելյանը, Լ. Արաբաջյանը, Ս.

ՈՐՈՇԵՑԻՆ.- ՄՖԻ ֆակուլտետի Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի

պաշտպանության պետական հանձնաժողովների հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6-1

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2022թ. ապրիլի 6 –ին ժ. 14:30 –ին 302 լսարանում
տեղի ունեցած թիվ 6 նիստի:

Խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում էին 23-ը:

Օրակարգ

1. Առկա բաժնի ուսումնական և առարկայական ծրագրերի մասին:

Ջեկ. Գ. Դեմիրխանյան

2. Ավարտական աշխատանքների և երկրորդ տարվա մագիստրոսների թեզերի
պատրաստման ընթացքի մասին:

Ջեկ. Ա. Թադևոսյան

Է. Կոկանյան

Լ. Ղուլդազարյան

Ա. Սահրադյան

3. 2022 – 23 ուսումնական տարվա ընդունելության մասին:

Ջեկ. Գ. Դեմիրխանյան

Ընթացիկ հարցեր: ա) Գ. Ռ. Ղուլդազարյանի և Լ. Գ. Ղուլդազարյանի "Մաթեմատիկական
անալիզ. Ինտեգրալ հաշիվ" ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու
հարցը և միջնորդել ՀՊՄՀ –ի գիտական խորհրդին տպագրության երաշխավորություն
ստանալու համար:

բ) Ամբիոնի հայցորդ Մանե Սևաչյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի
քննարկման և հաստատման հարցը:

գ) Ամբիոնի հայցորդ Աննա Ներսեսյանի ատենախոսության թեման «Վերառարկայական
կարողությունների ձևավորումը բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցման
գործընթացում»(ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա մասնագիտությամբ)
վերնագրով քննարկման և ղեկավարի հաստատման հարցը:

դ) Մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Ղազարյան Սյուզաննայի
մագիստրոսական թեզի՝ «Բնագիտական խնդիրների դիֆերենցիալ մոդելներ» թեմայի
վերնագրի փոփոխման հարցը:

Քվորումը ապահովված էր, նիստը սկսվեց ժամանակին և հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ. – Առկա բաժնի ուսումնական և առարկայական ծրագրերի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Գ. Դեմիրխանյան նշեց, որ փոքր փոփոխություններ՝ 10% -ի չափով կարելի է
անել առանց գիտական խորհրդի իմացության: 2012թ.ից տաս տարի է անցել, եթե ամեն տարի

այդքան փոփոխես դառնում է զգալի փոփոխություն: Փոփոխությունը կարելի է կատարել ուսումնական պլանի կառուցվածքից ելնելով, չնայած դա քիչ է: Ուսումնական պլանները պետք է տարբերվեն մասնագիտական այլ բուհերից: Օրինակ՝ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում դասավանդվող քվանտային մեխանիկան ըստ էության տարբերվում է ֆիզիկայի ֆակուլտետի քվանտային մեխանիկայից բովանդակային իմաստը նույնն է, բայց խնդիրների դրվագքը տարբեր է, կամ մեր մոտ մաթ անալիզը նույն խորությամբ չեն անցնում ինչպես պոլիտեխնիկում: Մեր կրթական ծրագրերը որքանով են համապատասխանում մեր ընդունած կարգին և դա կապ չունի չափորոշիչների հետ: Ա. Թադևոսյանն ասաց, որ կրթական չափորոշիչները փորձարկում են անցնում Տաուշում: Գ. Դեմիրխանյանն անդրադարձավ կարգին և ասաց, որ այստեղ էլ կան թերություններ, թեկուզ այն, որ բացատրված չեն տերմինները: Հ. Միքայելյանը հարցրեց, արդյո՞ք բակալավրիական կրթական ծրագիրը կարգից հետո չի եղել, հիմքը դա չէ: Գ. Դեմիրխանյանն ավելացրեց, որ համալսարանի գիտական խորհրդի կողմից բակալավրիական կրթական ծրագիրը ընդունվել է 2018 թ-ին: Մենք ընդհանուր մասնագիտական դասընթաց և հատուկ մասնագիտական դասընթաց բլոկներում ենք, սահմանված չէ թե ինչ է սա: 3.11-ում գրված է թե մասնագիտական դասընթացի քանի % -ն է 240 կրեդիտից, իսկ դրանից 20-30%-ը հատկացվում է կամրնտրական առարկաներին: Ընդհանուր դասընթացները ընդունել են մեթոդիկաները, իսկ մնացածը ոչ մեթոդիկաները (մաթ. անալիզը և այլն): Մաթեմատիկա- հատուկ դասընթացը 92 կրեդիտ - 38%, 44 կրեդիտը ընդհանուրը , մասնագիտական 92 կրեդիտ, մեթոդիկա - 62 կրեդիտ, որից 18 կրեդիտ – մանկավարժական պրակտիկա, եթե հանում ենք իրարից կազմում է 18%, այնինչ պետք է կազմեր 25%-ից ոչ պակաս: Իսկ ընտ. դասընթացները - 6 կրեդիտ են, այնինչ պետք է լինի – 37 կրեդիտ: Նույնը մյուս մասնագիտություններում: Մենք խոսում ենք կարգը պահելուց: Ն. Սաֆարյանը ասաց, որ 2012թ.-ից այս կարգը գործում էր, մինչև հիմա և ոչ մեկը չի տեսել: Ա. Սահրադյանը հարցրեց, այդ ինչպես է որ ամեն տարի ուսումնական մասը հաստատում է մեր ծանրաբեռնվածությունը, ու ոչ մեկը չի նայել: Ն. Օրդյանը ասաց, որ 2018թ-ից հետո ուս. պլաններում փոփոխություն չի եղել: Գ. Դեմիրխանյանը հարցրեց թե որտեղից է երևում, որ ՀՊՄՀ ֆիզիկայի բաժնի շրջանավարտը տարբերվում է ԵՊՀ –ի ֆիզիկայի ֆակուլտետի շրջանավարտից (ուսումնական պլաններով և

առարկայական ծրագրերով): Առաջարկում եմ ինտենսիվացնել մեթոդական խորհուրդի աշխատանքը, որպեսզի վերանայեն և ներկայացնեն ՀՊՄՀ գիտական խորհրդին ոչ միայն վերնագրերը ետ ու առաջ տանելով, այլ նաև պետք է լինեն առարկայական ծրագրերը, որպեսզի սեպտեմբերի 1-ից մենք աշխատենք անխափան: Ա. Թադևոսյանն էլ ասաց, որ Ս. Ասատրյանն ասել է, որ % - ների փոփոխություն է սպասվում: Չլինի այնպես, որ անենք մի բան, որը հետագայում պետք է նորից փոխվի: Գ. Դեմիրխանյանը ասաց, որ մյուս շաբաթ հավաքենք մեթոդական խորհուրդը սկսենք տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտությունից: Ամբիոններում պետք է նայեն, հետո քննարկենք մեթոդական խորհրդում, ներկայացնենք ֆակուլտետի խորհուրդ հարցը: Հ. Միքայելյանը ասաց, որ նախ լուծենք ուսումնական պլանների հարցը, հետո առարկայական ծրագրերի, բևեռելով ուշադրությունը առարկաների բովանդակության վրա: Գ. Դեմիրխանյանն էլ պատասխանեց, որ մենք պետք է լուծենք զրոյական մակարդակը, որը պայմանականքրեն ուսումնական պլանն է, որտեղ գրված է քվանտային մեխանիկա, բայց բացված չէ թե դա ինչ է, հետո հաջորդ քայլերը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- մեթոդական խորհուրդը հավաքվի և քննարկի ուսումնական պլանները մասնագիտություն առ մասնագիտություն:

ԼՄԵՑԻՆ. – ՝ Ավարտական աշխատանքների և երկրորդ տարվա մագիստրոսների թեզերի պատրաստման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-՝Ամբիոնների վարիչներն ասացին, որ ամեն ինչ նորմալ է ընթանում, խնդիրներ չկան: Է. Ղուլյանն ասաց, որ ավարտական կուրսերի մոտ հարցում են անցկացրել և ուսանողների մոտ նորմալ է այդ հարցում: Ն. Օրդյանն ասաց, որ մաթեմատիկներից Կոտոլկյան Հակոբը դուրս է մնացել:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն

ԼՄԵՑԻՆ. – ՝ 2022 – 23 ուսումնական տարվա ընդունելության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-՝ Գ. Դեմիրխանյանն ասաց, որ կառավարությունն ընդունել է, որ եկող տարի ընդունելության համար տալու են երկու քննություն՝ մաթեմատիկները մաթեմատիկա և ֆիզիկա կամ անգլերեն, ֆիզիկները- մաթեմատիկա և ֆիզիկա կամ անգլերեն, ինֆորմատիկները- մաթեմատիկա և ֆիզիկա, տեխնոլոգները- մաթեմատիկա և հայոց լեզու, բայց մեր կոնսիդերենտը

90%-ը հանապատասխան շրջաններից են, ովքեր ոչ նորմալ ֆիզիկա են անցնում և առավել ևս անզլերեն: Ըստ կանխատեսումների կունենանք մաթեմատիկայում 7 ուսանող, ֆիզիկայում՝ 0 ուսանող, ինֆորմատիկայում՝ 5 ուսանող, տեխնոլոգիայում՝ 0 ուսանող: Ուսման վարձի խնդիր էլ կա: Պետք է կոնկրետ քայլեր անել: Հոկտեմբերից սկսած անում ենք ամենամսյա մրցույթ ընդունելության քննության խնդիրներից մի քիչ բարձր մակարդակով և ով 90 -ից բարձր միավոր են հավաքում ընդունելության դեպքում օգտվում են 50% վարձավճարի զեղչից: Այս ինֆորմացիան պետք է տարածել: Մենք լուրջ խնդրի առաջ ենք կանգնում: Բացի սրանից անենք շաբաթը երկու անգամ կոնսուլտացիաներ՝ անվճար, ֆիզիկայից և մաթեմատիկայից:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Ընդունել ի գիտություն

Ընթացիկ հարցեր.

ա) **ԼՍԵՑԻՆ**՝ Գ.Ռ.Ղուլղազարյանի և Լ.Գ. Ղուլղազարյանի «Մաթեմատիկական անալիզ: Ինտեգրալ հաշիվ» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գ. Դեմիրխանյանը, Լ. Ղուլղազարյանը, Հ. Միքայելյանը, Գ. Ղուլղազարյանը, Վ. Վարդազարյանը: Հ. Միքայելյանն առաջարկեց գրել ուսումնական ձեռնարկ, քանի որ լավ աշխատանք է արված: Լ. Ղուլղազարյանն էլ հիմնավորեց, թե ինչու լինի ուսումնամեթոդական ձեռնարկ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ (միաձայն քվեարկության արդյունքում)՝ Գ.Ռ.Ղուլղազարյանի և Լ.Գ. Ղուլղազարյանի «Մաթեմատիկական անալիզ: Ինտեգրալ հաշիվ» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության, և միջնորդել ՀՊՄՀ -ի գիտական խորհրդին տպագրության երաշխավորություն ստանալու համար:

բ) **ԼՍԵՑԻՆ.** - Ամբիոնի հայցորդ Մանե Սևաչյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.՝ Լ. Ղուլղազարյանը, Հ. Միքայելյանը,

ՈՐՈՇԵՑԻՆ.- Առաջարկել հայցորդ Մանե Սևաչյանի ատենախոսության թեման՝ *«Ֆունկցիոնալ հավասարումները միակողմանի քվադրիսմբերում»* (Ս 01.06-Հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ) և թեմայի գիտական ղեկավար նշանակել ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիդով Սերգեյին: Միջնորդել ՀՊՄՀ գիտական խորհրդին Մանե Սևաչյանի ատենախոսության թեման՝ *«Ֆունկցիոնալ հավասարումները միակողմանի քվադրիսմբերում»* (Ս 01.06-Հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ) վերնագրով ԵՊՀ հաստատելու համար:

գ) **ԼՍԵՑԻՆ.** - Ամբիոնի հայցորդ Աննա Ներսեսյանի ատենախոսության թեման՝ «Վերառարկայական կարողությունների ձևավորումը բնագիտամաթեմատիկական առարկաների

ուսուցման գործընթացում»(ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա մասնագիտությամբ)
վերնագրով քննարկման և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Հ. Միքայելյանն ասաց, որ պարզ չէ վերառարկայական կարողությունները ինչ
են և թեմայի վերնագիրը կարիք ունի ճշտման

ՈՐՈՇԵՑԻՆ.- Այս հարցը թողնել հետագա քննարկման:

դ) **ԼՍԵՑԻՆ.** – Սագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Ղազարյան Սյուզաննայի
մագիստրոսական թեզի՝ «Բնագիտական խնդիրների դիֆերենցիալ մոդելներ» թեմայի վերնագրի
փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.՝ Լ. Ղուլղազարյանը, Հ. Միքայելյանը, Վ. Վարդազարյանը, Գ. Ղուլղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.՝ Սագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Ղազարյան Սյուզաննայի
մագիստրոսական թեզի թեման հաստատել «Անհավասարություններ և անհավասարումներ
թեմաների ուսուցման առանձնահատկությունները միջնակարգ դպրոցում» վերնագրով:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2022թ. Մարտի 7 –ին հարցման կարգով տեղի ունեցած թիվ 6 նիստից:

Օրակարգ

1. Թոփչյան Ռուբեն, Մելքոնյան Ալինա «Համակարգչային մտածելակերպ: Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի փորձնական դասագիրք/ Ռ.Թոփչյան, Ա.Մելքոնյան.-Եր.: "Շանթ Քոմփյու" ՍՊԸ, 2021.-212էջ:

2. Է. Մ. Ղազարյանի, Ա. Հ. Թոչունյանի, Գ.Հ. Դանագուլյանի, Գ. Գ. Մելիքյանի, Ս. Ս. Մայիլյանի «ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ» ձեռնարկները տպագրության երաշխավորելու և միջնորդելու ՀՊՄՀ-ի գիտխորհրդին տպագրության երաշխավորելու համար:

3. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ. –Ռուբեն Թոփչյանի, Ալինա Մելքոնյանի

«Համակարգչային մտածելակերպ: Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի փորձնական դասագիրք/ Ռ.Թոփչյան, Ա.Մելքոնյան.-Եր.: "Շանթ Քոմփյու" ՍՊԸ, 2021.-212էջ:» գիրքը տպագրության երաշխավորելու համար ՀՊՄՀ-ի գիտխորհրդին միջնորդելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Միջնորդել ՀՊՄՀ-ի գիտխորհրդին Ռուբեն Թոփչյանի, Ալինա Մելքոնյանի «Համակարգչային մտածելակերպ: Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի փորձնական դասագիրք/ Ռ.Թոփչյան, Ա.Մելքոնյան.-Եր.: "Շանթ Քոմփյու" ՍՊԸ, 2021.-212էջ:» գիրքը տպագրության երաշխավորելու համար:

ԼՍԵՑԻՆ. – Էդուարդ Մուշեղի Ղազարյանի, Արմեն Համբարձումի Թոչունյանի,

Գևորգ Հրաչի Դանագուլյանի, Գագիկ Գրիգորի Մելիքյանի, Սոս Սուրենի Մայիլյանի

«ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ» ձեռնարկը տպագրության երաշխավորելու համար ՀՊՄՀ-ի գիտխորհրդին միջնորդելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Միջնորդել ՀՊՄՀ-ի գիտխորհրդին Էդուարդ Մուշեղի Ղազարյանի, Արմեն Համբարձումի Թոչունյանի, Գևորգ Հրաչի Դանագուլյանի, Գագիկ Գրիգորի Մելիքյանի, Սոս

Սուրենի Մայիլյանի «ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ» ձեռնարկը
տպագրության երաշխավորելու համար:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի 2022թ. Մայիսի 6 –ին հարցման կարգով տեղի ունեցած թիվ 7 նիստից:

Օրակարգ.

1. ՄՖԻ ֆակուլտետի բակալավր 4-րդ կուրսի հետևյալ ուսանողներին կատարած կամավորական աշխատանքների համար համապատասխան միավորներ տալու հարցն է:
1.Մանուկյան Արգիշե Վարազդասի – մաթեմատիկ 4–րդ կուրս – 01.10.–ից 05.12.2020թ 45ժ, 20.02.–ից 26.06.2021թ, 76ժ, 04.09.–ից 25.12.2021թ, 76ժ, 08.08–ից 25.08.2021թ, 140ժ - 5,00 միավոր - Հայաստանի Միջազգային Կիրեո դպրոց, Զեփյուռ ճամբար - դասախոսի օգնական, ջոկատավար
- 2.Խաչատրյան Արաքսյա Սիսակի – մաթեմատիկ 4–րդ կուրս – 10.08–ից 01.09.2019թ 160ժ - 4,00 միավոր - Արագած մանկական հանգստի ճամբար-ջոկատավար
- 3.Խաչատրյան Մարլենա Ավետիսի – մաթեմատիկ 4–րդ կուրս – 12.01.–ից 14.02.2022թ 160ժ - 4,00 միավոր-Արարատի մարզ Մ.Մելքոնյանի անվ.միջ.դպրոց - ուսուցչի օգնական
- 4.Վարդանյան Երազիկ Վաղարշակի – մաթեմատիկ 4–րդ կուրս– 01.09.2021թ–31.01.2022թ, 108ժ - 2.7 միավոր - Հայկական կարմիր խաչի ընկերության ՎՁՄՄ - դասապատրաստող
- 5.Գալուստյան Վարդուհի Գեորգիի – մաթեմատիկ 4–րդ կուրս- 10.08–ից 01.09.2019թ 160ժ - 4,00 միավոր - Հեքիաթային կիրճ ճամբար-ջոկատավար
6. Մուրադյան Լիլիթ Դավթի – ինֆորմատիկ 4–րդ կուրս –10.01.–ից 18.03.2022թ, 220ժ - 5,00 միավոր - Կոտայքի մարզ Բուժականի միջնակարգ դպրոց - ուսուցչի օգնական
- 7.Սարգսյան Լիանա Էդվարդի – ինֆորմատիկ 4–րդ կուրս –10.01.–ից 14.03.2022թ.- 5,00 միավոր - Կոտայքի մարզ գ.Բջնիի միջնակարգ դպրոց - ուսուցչի օգնական
- 8.Գրիգորյան Մելինե Գագիկի – ֆիզիկա 4–րդ կուրս –10.08–ից 01.09.2019թ 160ժ - 4,00 միավոր - Հեքիաթային կիրճ ճամբար - ջոկատավար

ՈՐՈՇԵՑԻՆ. - ՄՖԻ ֆակուլտետի բակալավր 4-րդ կուրսի հետևյալ ուսանողներին տալ համապատասխան միավորները իրենց կատարած կամավորական աշխատանքների համար:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
ֆակուլտետի խորհրդի նիստի նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի 2022թ. Հունիսի 1 –ին ժ. 12:00 –ին

տեղի ունեցած թիվ 8 նիստի:

Խորհրդի 31 անդամներից նիստին մասնակցում էին 21-ը:

Օրակարգ

1. 2021-22 թթ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների քննարկում:

Ջեյ. Գ. Դեմիրխանյան

2. 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի քննությունների արդյունքների մասին:

Ջեյ. Ն. Օրդյան

3. Ընթացիկ հարցեր:

ա) ՄՖԻ ֆակուլտետի Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գազիկի Գրիգորյանի «Սովորողների ստեղծագործական ունակությունների տեսական և գիտափորձարարական մեթոդների զարգացման հետազոտումը տեխնոլոգիական կրթության ոլորտում» թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի քննարկման, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Սահրադյանին գիտական ղեկավար նշանակելու և Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի գիտական խորհուրդ ուղղորդելու հարցը:

բ) 2022-23 ուս տարվա դասաբաշխումների մասին:

գ) 2022-23 ուս տարվա ընդունելության մասին:

ԼՄԵՑԻՆ. –2021-22 թթ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.– Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց հաշվետվությունների փոփոխության մասին, այն որ ներկայացվում է SWOT վերլուծությամբ: Այնուհետև Գ. Դեմիրխանյանը բաց թողնելով ընդհանրական մասը, ընթերցեց կոնկրետ փաստերը: Սկզբում ընթերցվեց ինֆորմատիկա մասնագիտության հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը՝ առկա մագիստրատուրա, ուժեղ կողմեր- քննության գործընթացը և գնահատումը թափանցիկ էր:

Թույլ կողմեր- չկա

հնարավորություններ- քանի որ գրեթե բոլոր թեզերը ունեն գործնական նշանակություն, հնարավորություն կա հետագայում աշխատանքները գրվեն նաև գործատուների պատվերով, սպառնալիքներ-հնարավոր հոսանքագրկման, համացանցի խափանումների դեպքում մագիստրոսները չէին կարող ներկայացնել իրենց աշխատանքները:

Հաշվետվությունը վերջանում է եզրակացությամբ և մասնագետների պատրաստման գործընթացի որակի բարելավման ուղղությամբ առաջարկությունով: Գ. Դեմիրխանյանն ասաց, որ համարյա նույնն է գրված առկա բակալավրիատի և հեռակա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվության մեջ: Այնուհետև Գ. Դեմիրխանյանը կարդաց տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության հանջնաժողովի նախագահի հաշվետվությունը առկա մագիստրատուրայի համար՝ ուժեղ կողմեր- մագիստրանտները բավականին լավ տիրապետում էին ինչպես ներկայացված տեխնոլոգիաներին, այնպես էլ դպրոցում դրանց դասավանդման մեթոդիկային: Թեզերը կատարված էին բարձր մակարդակով և գրագետ: Նկարների և սխեմաների դիզայնն արված էր հաճելի և ընդունելի տարբերակներով: Ուժեղ կողմերից էր նաև մագիստրանտների փորձը և նյութին տիրապետումը, հատկապես դասավանդման մեթոդիկայի մասով: Թույլ կողմեր- հաշվի առնեն հանրապետությունում արդյունաբերության գերակա նպատակները, մշակույթի և արվեստի ոլորտներում օգտագործվող գործիքներին և տարազներին, ներառվեր նաև տեխնոլոգիական պրակտիկայի դասաժամեր: Հնարավորություններ- հատուկ ուշադրություն դարձնել լաբորատոր բազայի արդիականացմանը, ինչպես նաև համակարգչային տեխնիկայի ներգրավմանը դասավանդման գործընթացին: Ա. Սահրադյանն ասաց, որ ամբիոնի նիստին քննարկել են և հանձնաժողովի հախագահը ճիշտ է գրում լաբորատորական բազան ութսունական թվականների է: Հ. Միքայելյանն էլ հարցրեց թե ինչպես է նախագահը գլխի ընկնել, որ համակարգչային հնարավորությունները լավ չեն:

Գ. Դեմիրխանյանն անդրադարձավ մաթեմատիկա մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությանը, որտեղ գրված է, որ ուժեղ կողմեր են- ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի արդյունավետ աշխատանք, ուսումնական գործընթացի հյութատեխնիկական լավ աջակցություն: Թույլ կողմեր- շրջանավարտների ներքին ազնվության մոտիվացիայի ցածր մակարդակը ավարտական ախատանքը կատարելիս, շրջանավարտների կատարված աշխատանքի ինքնավերլուծության ունակության ցածր ձևավորում: Հնարավորություններ- տեխնիկական ուսումնական միջոցների սահմանափակ հասանելիության ապահովում և ուսումնական գործընթացի կազմակերպում, ամփոփիչ ատեստավորման համար համակարգված նախապատրաստության ապահովում, 100% նվազագույն շեմի հաղթահարում: Սպառնալիքներ- ամփոփիչ ատեստավորման ակադեմիական առաջադիմության և որակի տոկոսի նվազում, ավելորդ տեղեկատվությունը անտեսելու անկարողություն, ամփոփիչ ատեստավորման

Ժամանակ ոչ ստանդարտ իրավիճակը կարող է հանգեցնել սթրեսի: Լ. Ղուղազարյանն հավաստիացրեց, որ նախագահը գրել է այն ինչ նկատել է: Հ. Միքայելյանն էլ իր հերթին ավելացրեց, որ շրջանավարտները չգիտեն ինչպես ցիտեն, մեջբերումները գրեն: Գ. Դեմիրխանյանն անդրադարձավ ֆիզիկա մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի SWOT վերլուծությանը. սպառնալիք –չկա, ուժեղ կողմեր- ներկայացված է ֆիզիկա առարկայի արդյունավետ ուսուցման ճիշտ կազմակերպման մեթոդաբանություն, թույլ կողմեր-սլայդերի տեքստային ինֆորմացիայի ավելորդ ծանրաբեռնվածություն, հնարավորություններ- հաշվի առնելով դպրոցների նյութական միջոցների ավելացումը, ինչը հնարավորություն է տալիս փորձարարական լաբորատորիաների արդիականացման համար: Նշված գործընթացը պահանջում է ուսուցիչների փորձարարական հմտությունների և գիտելիքների անհրաժեշտ պաշարի ձևավորում: Թույլ կողմ էր նաև փորձարարական աշխատանքներում ստացված տվյալների ճշգրտության վերաբերյալ հարցերին ոչ հստակ պատասխաններ: Է. Կոկանյանն ասաց, որ նախագահի հետ քննարկել են այդ ամենը: Ն. Սաֆարյանը ներկայացրեց համալսարանի կտրվածքով ատեստավորման արդյունքները և ասաց, որ մերը վատ չէ: Նա նշեց նաև, որ նոր թեզերի վերնագրերին ուշադիր լինել, « ուսուցման մեթոդիկա» բառակապակցության մեխանիկական միացումը ոչինչ չեն փոխում: Հ. Միքայելյանն ասաց, որ հաշվետվության 4 մասերը շատ լավ են, հույսը պետք չէ դնել նրա վրա, որ նախագահները մեկնաբանի թե այդ կետերի տակ ինչ է հասկանում: Գիտ. խորհուրդը պետք է նախագահներին տար այդ 4 կետերի իմաստի մեկնաբանությունը: Լ. Ղուղազարյանը հավելեց, որ SWOT վերլուծությունը հիմնականում մանկավարժականին չի վերաբերվում: Ուղղակի նախապես պետք է ներկայացնել, որ այդպիսի հաշվետվություն վա: Է. Կոկանյանն ասաց, որ ամեն գործընթացի հանար ուղեցույց պետք է ստեղծել: Հ. Միքայելյանը գտավ, որ համակարգված մոտեցում է պետք:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն և որակի վարչության հետ համատեղ կազմել SWOT վերլուծության ուղեցույց և հանձնել նախագահներին ծանոթանալու նպատակով:

ԼՄԵՑԻՆ.- 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի քննությունների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Օրդյանն ասաց, որ քննաշրջանն ավարտվել է , բայց լուծարքը չի սկսվել: Գ. Դեմիրխանյան ներկայացրեց գնահատման կարգը: Երրորդ կուրսում 40-ից ցածր միավոր ստանալու դեպքում չեն կարող փոխադրվել չորրորդ կուրս: Զրկվում է կրկին հանձնելու հնարավորությունից: Մնացած լուծարք ունեցողները հնարավորություն ունեն հանձնելու: Երեք հոգի ֆակուլտետից հեռացման վտանգի տակ են Բայան Հովհաննեսը ինֆորմատիկայի երրորդ կուրս (ուս. խորհրդի նախագահ), Կարապետյան Վրեժը -ինֆորմատիկայի երրորդ կուրս, Մոսոյան Պետրոսը ֆիզիկայի երրորդ կուրս (չի մասնակցել պրակտիկային): Լուծարքը կվերջանա և պարզ կլինի:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր

ա) **ԼՍԵՑԻՆ.** – Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գագիկի Գրիգորյանի «Սովորողների ստեղծագործական ունակությունների տեսական և գիտափորձարարական մեթոդների զարգացման հետազոտումը տեխնոլոգիական կրթության ոլորտում» թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի քննարկման, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Սահրադյանին գիտական ղեկավար նշանակելու և Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի գիտական խորհուրդ ուղղորդելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ա. Գրիգորյանը ներկայացրեց թեմայի վերնագիրը, արդիականությունը, խնդիրները, նպատակը, առարկան, հետազոտության օբյեկտը, մեթոդները : Ա. Սահրադյանը, Հ. Միքայելյանը, Է. Կոկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Քվեարկության արդյունքում (միաձայն) հաստատել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գագիկի Գրիգորյանի ատենախոսության թեման՝ «Սովորողների ստեղծագործական ունակությունների տեսական և գիտափորձարարական մեթոդների զարգացման հիմնախնդիրը տեխնոլոգիական կրթության ոլորտում» վերնագրով, թեմայի գիտական ղեկավար նշանակել տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Սահրադյանին և հարցը ուղղորդել Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի գիտական խորհուրդ:

բ) **ԼՍԵՑԻՆ.** – 2022-23 ուս տարվա դասաբաշխումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը ներկայացրեց ռեկտորի շրջաբերականը, ըստ որի ծանրաբեռնել ըտրված և հիմնական դասախոսներին, կրճատել առաջնային համատեղող դասախոսներին, պահպանել նվազագույն ծանրաբեռնվածությունը 0.5 դրույքի չափով, գերծ մնալ ամբիոնից ամբիոն ժամերի փոխանակումից: Ի լրումն այս շրջաբերականի ռեկտորն ասել է, որ դա ուղեցույց է, որը հնարավորինս պահպանել, չնայած ամբիոնն ունի որոշում կայացնելու իրավունք համապատասխան հիմնավորումով: Գուցե դրույքաչափը առավելուգայնով չբաշխվի, այլ բաշխվի միջինով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

գ) **ԼՍԵՑԻՆ.** –2022-23 ուս տարվա ընդունելության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Դեմիրխանյանը հիշեցրեց, որ Ջավախքից ուսանողներին մենք ենք ընդունում, պետք է Ջավախքում համապատասխան աշխատանք տանել: Թեկուզ համոզել, եթե 6-7 ուսանող գա և դրանցից 1-2 գնան ինֆորմատիկա, որոշակի վիճակներ հաշվի առնելու համար: Մագիստրատուրայի համար ավելի շատ պետք է աշխատել: Մագիստրատուրայի ընդունելությունը հիմա էլ է կատարվում:

S. Այվազյանն ասաց, որ կան մասնագետներ, ովքեր կոնկուրսից դուրս են մնում վերցնենք դուրս մնացածներ տվյալներտ վերցնում ենք և աշխատում նրանց հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ՄՖԻ ֆակուլտետի խորհրդի նիստի
նախագահ՝



Գ.Գ. Դեմիրխանյան

Խորհրդի նիստի քարտուղար՝

Ա.Հ. Գրիգորյան